խանք հեռացուցանելով յիւրմէ և չհաւատալով նոցա զանձն իւր, չուրջ և բոլորն իւր ժողովեց զԽլախացն ազգն, և նոքօք չրջէր. և ընդ նոսա զամենայն ինչ և պէտս կատարէր և հոգայր: Եւ եկաց այս կերպիւ ի Խոդինն չորս ամիս. և յետոյ եկին մեծարարքն իւր և եպիսկոպոսն իւրեանց. և երեք անկամ երդուան նմա, զի մի նիւթ մահուան խորհեսցին նմա. և ապա առեալ գնացին ի դախդն (աթոռ) իւր՝ ուր միշտ նստեալ կայր. որ կոչի Յասն (Եաշ):

1572. Թվ. ՌԻԱ. Օլախի պարոն Պոկտան Վոյվոտան և իւր եղբայրն Բեդրան ելին իւրեանց երկրէն և եկին ի այս Իլախի աշխարհն, և կացին ոչինչ բազում ժամանակս. յետոյ կրկին կամեցան գնալ իւրեանց երկիրն. և Օլախի մեծամեծք չընդունեցին զնոսա. և ի Թուրքի խոնդիքարէն բերին իւրեանց այլ ուրիշ պարոն ոմն Իւոն անուն, զոր ի Մոսկով եղեր է ժամանակաւ: Եւ երբ տեսին այս երկու եղբայրքն՝ որ ատեցան և անարգ մնացին և ունայն իւրեանց պարոնութենէն, յետոյ հնարք գտին և գնացին առ զօրավարն Եազլովեցքին, որ նոցա ձեռնտու և օգնական լիցի, և տանի զիւրենք հեծելազօրովք, և նստուցանէ ի պարոնութիւն իւրեանց. և խոստացան նմա պարգեւս մեծամեծս: Եւ նա հրամայեաց հարիւրապետաց, զի իւրեանց գնդաւն երթիցեն և մտցեն ի երկիրն Օլախաց, և տարեալ նստուսցեն զնոքա ի պարոնութիւն: Եւ իբրեւ մտին ի երկիրն այն, ահա և նոքա պատրաստեցան և քաջացան, և հեծելովք ընդդէմ կացին, և ոչ ետուն թոյլ զի մըտանիցեն. և ոչ կամեցան զնոքա ի պարոնութիւն. այլ մանաւանդ բազում և շատ կորուստ եղաւ երկու կողմանէ, սոցա և նոցա, զի փոքր ի շատէ պատերազմեցան ընդ միմեանս. և Թուրք ազգն այլ կայր ի հետ Օլախի: Եւ ապա դարձան ունայն և նկուն և ատեցեալք եկին դարձեալ ի աշխարհս այս: Եւ այդ Իւան պարոն շատ իշխանք և մեծամեծք ջնջեց և կորոյս ի Օլախաց ազգէն, դառն և չարաչար մահուամբ. որպէս երբեմն ի կռապաշտից ժամանակն: Եւ յայն ժամանակի զԽոդինն այրեցին բովանդակ: Եւ էր գլուխ զօրաց վոյվոտայ Բոտոլսքիյ:

1572. Թվ. ՌԻԱ. Տէր Պետրոս ծեր քահանայն առ Աստուած փոխեցաւ. 52 ամ քահանայագործութիւն արար ի Ս. Աստուածածնին եկեղեցին, զոր Տէր Աստուած դասակից և պսակակից արասցէ զնա ընդ սուրբ քահանայսն և ընդ արդարսն. ամէն:

1572–3 Թվ. ՌԻԱ. Եկաւ Տէր Մարտիրոսն Համթեցի եպիսկոպոս ի այս աշխարհս՝ նուիրակ. և ընդ նմա Տէր Յովանէս անուն երէց մի, զոր ի յԻլովն վաղճանեցաւ. և Տէր Մարտիրոսն նուիրկեց զԻլովն և զԿամենիցն, և ելեալ գնաց փառօք և պատուով:

1572. Թվ. ՌԻԱ. Յուլիս ԺԵ. Բան Միքօլայ Գրիսքիյ նստաւ ի Կամենիցս ստարօստայութիւն, հրամանաւ բարեպաշտ թագաւորին Զիկմունդ Ա-